ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/105

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 23.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 23.10.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի փաստական հանգամանքները.

Պատվիրատուի կողմից 23.04.2018թ. հրատարակված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների գնման հրավերի շրջանակում /Հայտերի բացման նիստ՝ 02.05.2018թ./ «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ ճանաչվել է հաղթող մասնակից:

Նույն ընթացակարգի շրջանակում Պատվիրատուի և Ընկերության միջև 22.05.2018թ. կնքվել է Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների մատակարարման թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույցով սահմանվել է մատակարարման վերջնաժամկետ՝ մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը:

19.09.2018թ. գնման ընթացակարգով սահմանված կարգով և համաձայն Պայմանագրի 5.1 կետի Ընկերության կողմից Պատվիրատուի՝ ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Հյուսիսային 6 հասցեով մատակարարվել է գնման ընթացակարգով և պայմանագրով նախատեսված ապրանքը:

Համաձայն պայմանագրի 5.1 կետի Ընկերության կողմից նույն օրը Պատվիրատուին է տրամադրվել թիվ N Բ 3242608011 հաշիվ-ապրանքագիրը, իր կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրված՝ ապրանքը վերջինիս հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով նաև հանձնման-ընդունման արձանագրությունը՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ:

Պատվիրատուն 19.09.2018թ. մինչ օրս իր գործողություններով և անգործությամբ փաստացի չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև Ընկերության կողմից դուրս գրված թիվ N Բ 3242608011 հաշիվ-ապրանքագիրը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ գնումների գործընթացը հիմնվում է միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ ցանկացածանձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի՝ գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Տվյալ կոնկրետ դեպքում Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետներում՝ 19.09.2018թ. Պատվիրատուի՝ ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Հյուսիսային 6 հասցե է մատակարարվել ապրանքը և նույն օրը, Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններում, Պատվիրատուին է տրամադրել թիվ N Բ 3242608011 հաշիվ-ապրանքագիրը, ինչպես նաև էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով տրամադրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 5.4 կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Նման պայմաններում Պատվիրատուն պարտավոր էր օրենքի և Պայմանագրի ուժով 27.09.2018թ. Ընկերությանը տրամադրել հանձնման-ընդունման արձանագրությունը և ստորագրել հաշիվ-ապրանքագիրը:

Տվյալ դեպքում, հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ վիճարկվող գնման գործընթացի շրջանակներում Պատվիրատուի իրականացրած գործողություններն ակնհայտ ոչ իրավաչափ են, չեն բխում գործող օրենսդրության պահանջներից, ինչպես նաև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների էությունից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Բողոքի պահանջը.

Հիմք ընդունելով վերը հիշատակված նորմերի խախտումները և գործի փաստական հանգամանքները, բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

- «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքը Պատվիրատուի կողմից ճանաչել ընդունված,

- Պարտավորեցնել Պատվիրատուին ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև թիվ N Բ 3242608011 հաշիվ-ապրանքագիրը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Աշոտ Ասատրյանը և Կարեն Մնացականյանը:

2. <u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել նիստերին:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/105 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 23.10.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 22.05.2018թ. կնքված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր).

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն և ժանաչվել է Ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի արդյունքներով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 22.05.2018թ. կնքվել է Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների մատակարարման թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 պայմանագիրը:

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 23.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Ընկերությունը 19.09.2018թ. Պատվիրատուին է մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, որի վերաբերյալ համաձայն պայմանագրի 5.1 կետի Ընկերության կողմից նույն օրը Պատվիրատուին է տրամադրվել թիվ N Բ 3242608011 հաշիվ-ապրանքագիրը, և իր կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը: Սակայն, բողոքաբերի խոսքով, Պատվիրատուն՝ դրսևորելով անգործություն, մինչ օրս չի ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև Ընկերության կողմից դուրս գրված թիվ N Բ 3242608011 հաշիվ-ապրանքագիրը: Վերոգրյալով պայմանավորված՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին ընդունել պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքը, և ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը և թիվ N Բ 3242608011 հաշիվ-ապրանքագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

- 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 238-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևի Հավելված 7-ով սահմանված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի»՝

- 8.12 կետի համաձայն՝ Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

- 8.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է պայմանագրի կնքումից հետո, և նույն բողոքով Ընկերության կողմից վիճարկվում են Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի իրականացրած գործողությունները (անգործությունը):

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով, որ Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում ներկայացված Բողոքի քննության իրականացումը Բողոքներ քննող անձի կողմից դուրս է Օրենքով նախատեսված վերջինիս՝ իրավունքների և լիազորությունների շրջանակներից:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 23.10.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ